ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

26.05.2023թ.

ՈՐՈՇՈՒՄ 405-Ա

ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 8-րդ, 154-րդ և 219[1] պրիմ հոդվածներով, հետազոտելով Գորիս քաղաքի Սյունիքի փողոցի 22/1 հասցեի բնակիչ՝ Գագիկ Աղաջանյանի (ծնված՝ 13.10.1949թ., AR0545085, տրված՝ 22.12.2017թ., 032-ի կողմից, հաշվառված է Գորիս քաղաքի Սյունիքի փողոցի 22/1 հասցեում) կողմից կատարված վարչական իրավախախտման վերաբերյալ Գորիսի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բաժնի աշխատակիցների կողմից 2023 թվականի մայիսի 23-ին կազմված արձանագրությունը և կից նյութերը, պարզեցի՝ ՀՀ Սյունիքի մարզի Գորիս քաղաքի Սյունիքի փողոցի 22/1 հասցեի բնակիչ՝ Գագիկ Աղաջանյանը ՀՀ Սյունիքի մարզի Գորիս քաղաքում գտնվող սեփականության իրավունքով իրեն պատկանող Սյունիքի փողոցի 22/1 հասցեում ինքնակամ կառուցել է շինություն, այսինքն կատարել է արարք, որն առաջացնում է պատասխանատվություն «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով: Նկատի ունենալով, որ Գագիկ Աղաջանյանի արարքը վարչական իրավախախտում է՝ նախատեսված «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, ինչպես նաև ապահովելով փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Գագիկ Գեորգիի Աղաջանյանին ենթարկել վարչական պատասխանատվության, նրա նկատմամբ նշանակել վարչական տույժ, տուգանք՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով, այն է՝ 500.000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

2. Գագիկ Աղաջանյանի կողմից տուգանքը պետք է վճարվի տուգանք նշանակելու մասին որոշումը նրան հանձնելու օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում՝ Գորիսի

համայնքապետարանի 900285125150 հաշվեհամարին և վճարման անդորրագիրը ներկայացվի Գորիսի համայնքապետարանի աշխատակազմին:

3. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում օրենքով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ արդարադատության նախարարության հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով:

4. Որոշման պատճենը 3 օրվա ընթացքում հանձնել Գագիկ Աղաջանյանին:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշումը սահմանված կարգով Գագիկ Աղաջանյանին հանձնելու օրվանից հետո:

6. Սույն որոշման դեմ գանգատ կարող է տրվել որոշումը սահմանված կարգով հանձնելու օրվանից հետո՝ երեսուն օրվա ընթացքում կամ ՀՀ վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

ԱՌՈՒՇ ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

2023/26/05
Ք.Գորիս